



Դանիել Վարուժան

Գեղեցկության արձանին

Կուզեմ ըլլայ քու մարմարիո՛նդ պեղուած
Ոլիմպոսի ամենէն խոր արգանդէն.
Եւ իմ մութճիս տակ ըզգենու հրեղէն
Միս մը կնոջ, լոյսով, տենդով սրարբած:

Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուզի՝
Յաւերժին մէջ անմահացած ըզգայ զինք.
Գիծերդ անեղծ ըլլան, ըլլան քու ըստինք
Դաշնակութիւն մ'ուր կենսահիւթը յուզի:

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգւոյն պէս,
Եւ հեթանոս այդ մերկութեանդ ներքև
Տառապի՛ մարդն, ու չկրնայ դպչիլ քեզ:

Թէ հարկ ըլլայ գոհ մը ընել քեզ պարզև,
Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթուիլ՝
Որպէսզի կուճդ ըմպէ արեանս հուսկ կաթիլ: